

«Շրջադարձ» համահայկական հանդես,
Թիվ 2, մայիս, 2004

Արմեն Ալվազյան

Գիտությունն ու կեղծիքն անհամատեղելի են

Ս. թ. փետրվարի 11-ին ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՅ-ի) կողեգիան, վկայակոչելով թույլ տրված կանոնադրային խախտումները, չեղյալ հայտարարեց ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում գործող՝ ԲՈՅ-ի 004 մասնագիտական խորհրդի 2003 թ. դեկտեմբերի 9-ին կայացած նիստը, որը տապալել էր իմ դոկտորական ատենախոսության («Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում») պաշտպանությունը:

Այդ նիստի ընթացքի վրա ազդելու և այն կանխորոշելու նպատակով ուղիղ մեկ օր առաջ՝ փետրվարի 10-ին, կազմակերպվեցին ապակողմնորոշիչ ծավալուն հրապարակումներ. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում լույս տեսավ ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի միջին դարերի պատմության բաժնի ստորագրած՝ «Ո՞րն է գիտության ուղին: Կրկին մի ատենախոսության աղմկահարույց պաշտպանության նասին» հոդվածը, միաժամանակ ռուսալեզու «Նովյե վրեմյա»-ում հրապարակվեց «Հին պաշտպանության նոր տեսանկյուն» խորագրով նույնաբեզ մի հարցազրույց ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում գործող մասնագիտական խորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ փոխնախագահ Վ. Բարխուդարյանի և նույն Մասնագիտական խորհրդի փոխնախագահ, ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի նորընտիր վարիչ Բ. Հարությունյանի հետ:

Մեր ատենախոսության պաշտպանության կազմակերպված տապալումը բավականին լուսաբանվել է հայաստանյան և սփյուռքահայ մամուլում (վերջում գետեղել ենք կարևոր հրապարակումների համառոտ ցանկը): Հետագայում հանդես կգանք նաև տապալման բուն դրդապատճառների և հետևանքների ամփոփիչ վերլուծությամբ: Ուստի, հաշվի առնելով թերթային ծավալի սահմանափակումները՝ այժմ կապատասխանենք միայն «Ո՞րն է գիտության ուղին» նյութի «քնննադադարությանը»:

Սակայն սկզբում երկու խոսքով անդրադառնանք մեր ընդդիմախոսների դրսևորած «տրամաբանությանը»: Եթե պաշտպանությունս ձախողվել է իսկապես ատենախոսության թույլ լինելու պատճառով, ապա բնական կլիներ, եթե «Ո՞րն է գիտության ուղին» նյութի հեղինակները՝ ԵՊՀ նշված ամբիոնն ու Պատմության ինստիտուտի նշված բաժինը (այսուհետև՝ Ա.-Ա և Բ.-Ա), հրապարակեին

պաշտպանության ընթացքում իրենց կարդիքներն ու հենց տեղում դրանց տված իմ պատասխանները, դրանով ընթերցողին հնարավորություն ընձեռելով օբյեկտիվ պատկերացում կազմել պաշտպանության ընթացքի մասին: Բայց Ա.-ն և Բ.-ն ընտրել են այլ մարտավարություն: Մի կողմից՝ ներկայացրել են նոր՝ «պոստ-ֆակտում» հերուրած «թերություններ», որոնք պաշտպանության ժամանակ չեն ընթերցվել և դրանց պատասխաննելու հնարավորություն են ցայծն չեն ունեցել: Մյուս կողմից՝ կրկնել են մի շարք «քննադատություններ», որոնք պաշտպանության ժամանակ արդեն կետ առ կետ հերքել ենք (ըստ Երևոյթին՝ ընդդիմախոսներս առաջնորդվում են քարոզական այն հանրահայտ հնարքով, ըստ որի՝ սուտը որքան շատ կրկնվի, այնքան դրան շատ կհավատան):

«Հին» քննադատություն

Հին քննադատության «գինանոցից» կրկնվել են հետևյալ շինուու կետերը. ա) ատենախոսության խորագրի ու բովանդակության հակասության մեջ գտնվելը, բ) ուսումնասիրության՝ հայ ազատագրական շարժման հետ կապ չունենալը, գ) ընդհանուր հայեցակարգի և առանցքի բացակայությունը, դ) ատենախոսության՝ ԲՈՅ-ի կողմից պահանջվող կառուցվածքի և ծավալի բացակայությունը, դ) Ղազար Զահկեցու հակասական կերպարը դրական գնահատելը, ե) հավելվածների՝ ուսումնասիրության նյութի հետ չառնչվելը, զ) Ղազար Զահկեցու «Ողբ»-ի և «Աղօքք»-ի ազատագրական մոտիվների «սովորական» լինելը, է) թեմայի վերաբերյալ հրապարակված աշխատությունների անհրաժեշտ քանակության բացակայությունը:

Վերը նշված դրույթներից ամենազավեշտականը, թերևս, պահանջվող կառուցվածքի և ծավալի բացակայության մասին կետն է: Լրջախոհ ընթերցողի մոտ հարց կարող է առաջանալ. «Պարոնայք, եթե ամեն ինչ այդքան պարզ էր, այդ դեպքում ինչու՞ էիք առհասարակ ընդունել ատենախոսությունը և դրել այն հրապարակային պաշտպանության: Եվ միթե՞ Մատենադարանի պես ճանաչված գիտական իիմնարկում ու նաև ԲՈՅ-ում չին նկատել, որ Արմեն Այվազյանի աշխատանքը մի լիակատար խոտան է, որում նույնիսկ էջերի պահանջված քանակն ապահովված չէ»:

Սակայն ամբողջ խնդիրն այն է, որ ինչպես այս, այնպես էլ վերը թվարկված մյուս **բոլոր** «քննադատությունները» կեղծ են, և դրանք բոլորն էլ փաստացի հերքել ենք պաշտպանության ժամանակ՝ մեր պատասխաններում: «Նոր» քննադատություններին պատասխաննելու տեղ ապահովելով՝ ընթերցողին տեղեկացնենք, որ Հայոց պատմության ամբիոնին, միջին դարերի բաժնին և

պատմական գիտությունների դոկտոր Վալտեր Դիլոյանին մեր պատասխանները
հրապարակել ենք համացանցի հետևյալ էջում՝
www.artsakhworld.com/Armen_Aivazian/Reviews_and_Discussions/Articles_Eng.html:

«Նոր» քննադատություն

Փետրվարյան հրապարակումներում Ա.-ն և Բ.-ն փորձում են հասարակության իրենց դեմ արդարացիորեն առաջադրված քաղաքական պատվեր, «հակագիտական ու հակազգային ահաբեկչական գործողություն» կատարելու («Գոլոս Արմենիի», 16 դեկտեմբերի 2003 թ.) մեղադրականը «ջրել», Ա. Այվազյանի դոկտորականի պաշտպանության տապալման խնդիրը վերածելով ընդամենը մասնագիտական անձեռնիասության խնդիր՝ իբր «հրապարակային պաշտպանության է ներկայացված մի աշխատություն («Հայոց Եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում»), որն ամենահին չի բավարարում դոկտորական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին»: Ու թեև ատենախոսության պաշտպանությունից հետո կատարված որևէ նոր քննադատություն բուն պաշտպանության ընթացքի և արդյունքի մասին պատկերացում տալ չի կարող, այդուհանդեռ ստորև հաջորդաբար զննելու ենք մեզ ներկայացված ընդդիմախոսական նոր կետերի որակը, ծշմարտացիությունն ու արդարացիությունը, դրանով իսկ պարզելով մերօրյա հայ պատմագրության պարագլուխների գիտական անաչառության և սկզբունքայնության կերպն ու մակարդակը:

I. Ա.-ն և Բ.-ն գրում են. «Հեղինակը փորձում է Հայոց Եկեղեցին ներկայացնել միայն Սուրբ Եջմիածնի գործունեությամբ և մոռանում է նրա թեմական կառույցները, բովանդակ Հայոց Եկեղեցին, գործնականում անտեսում Աղթամարի ու Գանձասարի կաթողիկոսությունների և Երուսաղեմի պատրիարքության անուրանալի նպաստը նշված ժամանակաշրջանի հայ ազատագրական շարժմանը»: Փետրվարի 10-ին «Նովյե Վրեմյա»-ին տված հարցազրույցում Վ. Բարխուդարյանը և Բ. Հարությունյանը հավելել են, որ իբր նաև աչքաբող ենք արել «հայկական պատրիարքությունները, որոնք նույնպես կարևոր դեր են խաղացել հայ ազատագրական շարժման մեջ»:

Այս հայտարարություններում կա և բացահայտ սուտ, և մասնագիտական անգրագիտություն, և հակասություն:

Սուտ այն է, որ ատենախոսության մեջ տասնյակ էջեր են նվիրված ինչպես Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքություններին, այնպես էլ Աղթամարի ու Գանձասարի կաթողիկոսությունների գործունեությանը:

Մասմագիտական անգրագիտությունն այն է, որ Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքությունների «անուրանալի նպաստը նշված ժամանակաշրջանի հայ ազատագրական շարժման» առաջին անգամ հնչած անապացույց և անընդունելի վարկած է, ավելի ճիշտ՝ անպատրաստ ընթերցողին ապակողմնորոշելու համար հորինված հեքիաբ:

Յակասությունն էլ այն է, որ հենց հիշյալ երկու հրապարակումներն ընդունում են, որ ատենախոսությունը քննել է «Հովհաննես Կոլոտ պատրիարքի և Աքրահամ կաթողիկոսի փոխհարաբերությունները» և «սուլթանական արքունիքի՝ հայոց եկեղեցու նկատմամբ վարած քաղաքականությունը», պարզորեն հակասելով իրենց իսկ պնդմանը, թե «հեղինակը փորձում է Յայոց եկեղեցին ներկայացնել միայն Սուրբ Եջմիածնի գործունեությամբ»:

II. Ա.-ն և Բ.-ն գրում են. «Գիտական խնդրի դրվածքի լիակատար բացակայությունը պայմանավորել է ատենախոսության արդյունքների ծայրահեղ համեստությունը»:

Այս առթիվ տեղին է մեջբերել մի քանի քաղվածք մեր երեք պաշտոնական ընդդիմախոսների՝ պաշտպանության ժամանակ ընթերցած կարծիքներից:
Ակադեմիկոս Մանվել Զոլյայյան. «Սկզբից ևեր պետք է ասել, որ աշխատությունը նորություն է իր տեսակի մեջ: Յայ ազատագրական շարժումների Յայոց եկեղեցու հետ ունեցած հույժ գաղտնի կապերի ուսումնասիրությունն ինքնստիմքյան պահանջում է ոչ սովորական, այլ հետախուզական-քննչական տիպի պատմագիտական աշխատանք: Ատենախոսն ինքն իր առջև դրել է անհայտներով լի բարդագույն հետազոտական խնդիրներ, որոնց բացահայտումը պահանջում է տարանջատ բազմաթիվ սկզբնաղբյուրների համեմատական բժախնդիր քննություն:

Թեմայի լուսաբանման համար անհրաժեշտ է եղել քննել մի շարք խոչը խնդիրներ, այդ թվում՝ օտար տիրապետող ուժերի ներգրավվելը Ամենայն հայոց կաթողիկոսների ընտրությունների մեջ, ազատագրական մտայնություն ձևավորող հայոց ազգային-եկեղեցական գաղափարախոսությունն իր մինչև այժմ գրեթե բացարձակապես չուսումնասիրված տարրերով, այդ գաղափարախոսության քարոզման միջոցները, հայադական-կաթոլիկ հարաբերությունները և այլն: ...Աշխատության հիմնական արժանիքը բացահայտվող նորությունների առատությունն է. դրանց թվարկումը միայն մեզմից կարող է ավելի ժամանակ խլել, քան սովորաբար հատկացվում է ընդդիմախոսին» (ընդգծումներն իմն են - Ա. Ա.):

Պատմական գիտությունների դոկտոր Եղվարդ Դանիելյան. «ատենախոսությունը... լուրջ գիտական ներդրում է XVIII դարի միջազգային բարդ իրավիճակում Նայ Եկեղեցու և նրա նշանավոր գործիչների՝ հայոց պատագրական պատմության մեջ ունեցած ներդրումի ուսումնասիրության և գմահատման ասպարեզում»:

Պատմական գիտությունների դոկտոր Վալենտին Ղիլոյան. «ատենախոսությունն ընդգրկում է հայ Եկեղեցու 17-18-րդ դարերի պատմությանն առնչվող խիստ կարևոր դրվագների մի ամբողջ համալիր, դրվագներ, որոնք ատենախոսը կարողացել է մեծ հմտությամբ շաղկապել միմյանց և հանգել բավական հիմնավոր և ինքնօրինակ եզրակացությունների... Ամփոփելով մեր խոսքը, պետք է նշենք, որ ատենախոս Ա. Ս. Այվազյանը հետազոտել, քննարկել և վերլուծել է հիմնահարցեր, որոնք մեծ հետաքրքրություն և կարևորություն են ներկայացնում 17-18-րդ դարերի հայոց պատմության հիմնախնդիրները ծշմարտորեն լուսաբանելու առումով։ Ատենախոսը կարողացել է առաջադրել և հիմնավորել մի շարք դրույթներ, որոնք նպաստում են նորովի լուսաբանելու մի շարք հիմնախնդիրներ։ Այսու միջնորդում ենք ՀՅ ԳԱՍ Պատմության իմստիտուտում գործող ԲՈՂ-ի 004 մասնագիտական խորհրդին շնորհելու ատենախոս Արմեն Մարտիրի Այվազյանին իր հայցած պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանը»։ (Մի քանի օր անց Վ. Ղիլոյանը հայտարարեց, թե ինքն իբր բացասական կարծիք է տվել ին ատենախոսությանը, բայց այս դիմակափոխությունն արդեն մեկնաբանել ենք՝ «Ինչու՝ տապալվեց պաշտպանությունը», հարցազրույց (ռուսերեն), տես Համացանցի վերը նշված էզում հարցազրույցը):

Կարծում ենք՝ լրացուցիչ մեկնաբանություններն ավելորդ են:

III. Բաժնի և ամբիոնի անբարյացակամությունն ատենախոսի նկատմամբ երբեմն ընդունում է հիրավի հիվանդագին դրսեւրումներ։ Պարզվում է մենք իրավունք չունեինք գրելու, որ «XV-XVIII դարերում Նայ Եկեղեցին մեծ գործ կատարեց. պահպանեց ազգային ինքնագիտակցությունը, կազմակերպեց ազգային կրթությունը, հնարավորին չափով առաջ տարավ մշակույթը» և այլն, ինչ է թե այդ մասին նման մի բան էլ գրված է նաև V դասարանի դասագրքում։ Ըստ Երևանյին, այլևս ոչ ոք իրավունք չունի գրելու, որ, օրինակ, 1914 թ. սկսվել է Առաջին համաշխարհային պատերազմը, որովհետև այդ մասին դասագրքերում արդեն գրված է, և Ա.-ն և Բ.-ն դա կիամարեն որպես Երկրորդ անգամ «Արքիմեդի օրենքի հայտնագործում»։ Անբիոնի և բաժնի աշխատակիցներին խորհրդությունը կտայինք նորից կարդալ ատենախոսության

Վերջաբանը. ճրանք այնտեղ հաստատ նմանություններ կգտնեն նույնիսկ այբբենարանի հետ...

IV. Ա.-ն և Բ.-ն գրում են.

«Աշխատության հեղինակը նպատակադիր կերպով աշխատել է որքան հնարավոր է չափազանցված ներկայացնել իր վաստակը՝ դիմելով անգամ իր նախորդների աշխատանքները նսեմացնելու կամ անտեսելու եղանակին... Բերենք մի օրինակ՝ ատենախոսության 227-րդ էջի թիվ 208 ծանոթագրությունում հեղինակը ցնող պարզաբանում է կատարում. «...1652 թ. Երուսաղեմում կայացած Եկեղեցական ժողովը մեկնաբանելիս՝ Օրմանյանը հանգել էր ճիշտ մեր վերոգրյալ Եղրակացությանը...»: Մեկնաբանություններն ավելորդ են: Լոկ կարելի է զարմանալ և հիանալ Ս. Օրմանյանի խորաթափանցության վրա, որ գրեթե մեկ դար առաջ կրահել էր Ա. Այվազյանի մտքերը»:

Այս տողերը կոչված են գործին անտեղյակ ընթերցողի մոտ այն տպավորությունն ստեղծելու, թե Ա. Այվազյանը մի ինչ-որ այնպիսի բան է գրել, որ իրենից առաջ նույնությանք ասել էր Օրմանյանը: Իրականում, քննելով և բացահայտելով 1441 թ. տեղի ունեցած կաթողիկոսական ընտրություններին աշխարհականների ձևական մասնակցությունը, մենք ծանոթագրել ենք, որ աշխարհականների մի նմանօրինակ մասնակցություն էլ Օրմանյանը նկատել էր 1652 թ. Երուսաղեմում կայացած Եկեղեցական ժողովի ժամանակ: Սա միանգամայն տեղին և որևէ «կրիմինալ» չպարունակող ծանոթագրություն է: Մենք և Օրմանյանը, քննելով Եկեղեցական տարբեր ժողովներ, նկատել ենք նույնատիպ մի երևույթ՝ այդ ժողովներին աշխարհականները մասնակցել են ձևականորեն: Միթե՝ վատ է, որ ես նկատել և նշել եմ այդ հանգամանքը: Այս կարգի անձարակ «քննադատության» միակ նպատակն ընթերցողին մոլորեցնելն ու Ա. Այվազյանի դեմ տրամադրելն է:

Վերոբերյալ «դիտողության» մեջ Ա.-ն և Բ.-ն նշում են «ատենախոսության 227-րդ էջի թիվ 208 ծանոթագրությունը»՝ նոռանալով, որ իրենց կարծիքների մեջ երկուսն էլ պնդում էին, որ մեր ատենախոսությունը բաղկացած է 161 էջից և չունի պահանջված 200 էջը: Այսպիսով Ա.-ն և Բ.-ն «սայթաքում» և ընկնում են իրենց իսկ լարած ստերի ցանցի մեջ:

V. Ա.-ն և Բ.-ն գրում են. «ատենախոսը չքննել տեսք է ընդունում, թե անծանոթ է Նոր Ջուղայի պատմության ճամաչված մասնագետ Վազգեն Ղուկասյանի *The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the Seventeenth Century* (Atlanta, Georgia: Scholars Press, 1995, 1998) աշխատությանը, որտեղ, ի միջի այլոց, նույնաեւ

թիվ 1 հավելվածի տակ դեռ 1995 թվականին հրատարակված, ծանոթագրված և ուսումնասիրված է՝ 1693 թ. Նոր Զուղայում տպագրված մի շրջաբերական, որը հրատարակել ենք ատենախոսության մեջ:

Այս քննադատության ամարդարացիությունն ու սխալներն այնքան շատ են, որ ստիպված ենք ներկայացնել դրանք վեց առանձին կետով.

ա. Խնդրո առարկա վավերագրի քննությամբ և մասնակի հրատարակությամբ մենք հանդես ենք եկել տակավին 1995 թ. թվականի մարտի 26-ին «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, որը մի ամբողջ էջ էր տրամադրել մեր «Կաթողիկոսական ընտրություններին վերաբերող երկու արժեքավոր փաստաթուղթ» հրապարակմանը (1995 թ-ի փետրվարին ընթերցվել է Մատենադարանի գիտխորհրդի նիստում): Մի քանի օր անց Կ. Պոլսի պատրիարք Մեսրոպ արք. Մութաֆյանի խնդրանքով, այդ նյութի ամբողջական ծանոթագրված տարբերակը, հանձնել ենք տպագրության՝ պատրիարքարանի «Շողակար» հանդեսի Բ համարին, որը, սակայն, մինչ օրս չի տեսել: Ուսումնասիրության ընդարձակ տարբերակն ուշացումով հրապարակվել է «Հանդէս Անսօրեայ»-ում (հունվար-դեկտեմբեր 2000, №. 1-12): Այս փաստն արձանագրված է նաև ատենախոսության 25-րդ էջի համար 22 ծանոթագրության մեջ:

բ. 1995 թ. Վազգեն Ղուկասյանն այդպիսի գիրք լույս չի ընծայել ոչ նշված հրատարակչությունում, ոչ էլ այլուր: Իսկ եթե հեղինակները նկատի ունեն 1995 թ. Կոլումբիայի համալսարանում պաշտպանության ներկայացված Վ. Ղուկասյանի ատենախոսության բնօրինակը, ապա այն գիրք անվանելը սխալ է: Ամեն դեպքում՝ մեր հրապարակումը եղել է ավելի վաղ, քան Վ. Ղուկասյանինը: Յետևաբար, մեր դեմ ուղղված ուրիշի աշխատանքը չգնահատելու մեղադրանքը շինծու է: Ի գիտություն ԵՊՀ ամբիոնի և Պատմության ինստիտուտի բաժնի՝ նշենք նաև, որ Կոլումբիայի համալսարանը գտնվում է Նյու-Յորքի նահանգի Նյու-Յորք քաղաքում, այլ ոչ թե Զորջիա նահանգի Ալթանտա քաղաքում:

գ. 1995 թ. Կոլումբիայի համալսարան ներկայացրած Վ. Ղուկասյանի ատենախոսության մեջ 1693 թ. Նոր Զուղայում տպագրված խնդրո առարկա շրջաբերականը ոչ հրատարակված է, ոչ էլ ուսումնասիրված, ինչպես պնդում են Ա.-ն և Բ.-ն: Ատենախոսության մեջ այդ շրջաբերականը թարգմանված է անգլերենի, նաև գետեղված է դրա բնօրինակի (ֆաքսիմիլեի) փոքրացված՝ **անթեռների** լուսապատճեն (էջ 302-313): Միթե՝ Ա.-ն ու Բ.-ն պատմական վավերագրի լուսապատճենն ու թարգմանությունը գիտական հրատարակությունից չեն տարբերում...

դ. Ինչ վերաբերում է Վ. Ղուկասյանի 1998 թ. հրատարակած գրքին, ապա լուսապատճենի փոխարեն այնտեղ զետեղված է Յ. Տեր-Յովհանյանցի 1881 թվականի այդ շրջաբերականի հրատարակության տառացի արտագրությունը: Միթե՝ Ա.-ն ու Բ.-ն տառացի արտագրությունը (այն է՝ վերահրատարակությունը) չեն տարբերում գիտական հրատարակությունից...

Ե. 1693 թ. Նոր Զուղայում տպագրված շրջաբերականը հրապարակելիս՝ մենք ուղղակիորեն հենվել ենք Երևանի Ազգային գրադարանում պահվող լուսապատճենի վրա: Դրա շնորհիվ ուղղել ենք Յ. Տեր-Յովհանյանցի հրատարակության մեջ առկա 22 (!) թյուրընթերցում, որոնցից շատերն ինաստային շեղումներ են, օրինակ՝ Տեր-Յովհանյանցը «յերևան»-ի փոխարեն հասկացել է «յերևան» տեղանուն, «չԱւետս» անվան փոխարեն՝ «զաւետս», «ի յարգի»-ի փոխարեն՝ «ի կարգի», «յազգս»-ի փոխարեն՝ «յաղազս» և այլն: Մինչդեռ Վ. Ղուկասյանի գրքում բոլոր 22 թյուրընթերցումներն ել առկա են, այսինքն՝ խոսել նրա կատարած ինչ-որ ծանոթագրված և ուսումնասիրված հրատարակության մասին չի կարելի: Ա.-ն և Բ.-ն գրադվում են աչքակապությամբ և չեն ցանկանում նկատել այդ շրջաբերականի մեր գիտական հրատարակությունը՝ ներառյալ նրանում հիշատակված պատմական խրին ծալքերի, դեմքերի և հանգամանքների մանրազնին քննությունը: Գիտական աշխատանքս օբյեկտիվորեն գնահատելու կոչված կառույցները՝ Ա.-ն և Բ.-ն, ընկղոնված են աշխատանքիս անհիմն, անսանձ և քայլայիշ պախարակնամբ, գիտության ճանապարհը փակելով:

Գ. Ամբիոնի և բաժնի անբարյացակամությունն ակնհայտ է: Նրանց մտքով անգամ չի անցնում, որ եթե մենք մինչև մեր ատենախոսությունը հանձնելու օրը ծանոթ լինեինք Վ. Ղուկասյանի ատենախոսությանն ու գրքին (ի դեպ, Մատենադարանի գրադարան է մուտք գործել միայն 1997 թ. Անն-Յարբոր քաղաքում պատճենահանված ատենախոսությունը), ապա անտարակույս և հաճույքով կնշեինք այդ հրապարակումներն ու նրանցում խնդրո առարկա շրջաբերականի արծարծումը, թեկուզ այն մեր հետազոտության նպատակների տեսանկյունից գրոյական արժեք է ներկայացնում: Բանն այն է, որ Վ. Ղուկասյանն ընդամենը հպանցիկ օգտագործել է շրջաբերականի բովանդակությունից մի հատված (գրքում՝ էջ 112) և մի քանի ծանոթագրություն արել, որոնք մասամբ վերցված են Յ. Տեր-Յովհանյանցի 1881 թվականի հրատարակությունից, մասամբ էլ՝ հանրահայտ փաստեր են, օրինակ, «Աստապատ՝ հայտնի գյուղ Նախիջևանում» կամ «Քերոբյահայր՝ Մովսես Խորենացի» և այլն:

Մյուս կողմից՝ Ա.-Ն և Բ.-Ն առաջնորդվում են Երկակի չափանիշներով և չեն նկատում, որ Վ. Դուկասյանը, ինչպես նաև այդ ժամանակաշրջանով մասնագիտացող ամերիկացի այլ հայագետներ, գեթ մեկ անգամ չեն հիշատակում իրենց աշխատանքային լեզվով՝ անգլերենով հրապարակված իմ հետևյալ մենագրությունը՝ *The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal* (Yerevan: Center for Policy Analysis, American University of Armenia, 1997), իսկ Զորջ Բուռնությանն այնտեղից բացահայտորեն գրագողություն է անում (այս հարցին անդրադառնալու ենք առանձին հրապարակմամբ): Սակայն ամերիկյան հայագետներին Ա.-Ն և Բ.-Ն քննադատել, բնականաբար, չեն համարձակվում, նրանց առջև ճիշտ հակառակ խնդիրն է դրված՝ ամեն գնով հանիրավի վարկաբեկել նույն ամերիկյան հայագիտական դպրոցին քննադատած Ա. Այվազյանին:

(Ի դեպ, 1997 թ. լույս տեսած մեր այդ անգլերեն մենագրության մեջ ուղղակիորեն հղել ենք «Շողակաթ»-ին տպագրության հանձնված ուսումնասիրությունը, տես էջ 81, ծանոթագրություն 169:)

VI. Ա.-Ն և Բ.-Ն ճիշտ նույն մոտեցումն են հանդես բերում Մատենադարանի համար 9120 ձեռագիր մատյանից մի փաստաթղթի մեր հրապարակման նկատմամբ: Նշում են, թե «ընդամենը մի քանի էջ կազմող վավերագրի՝ ատենախոսի կողմից վերահրատարակության մեջ» տեղ են գտել այնքան «վրիպակ և վրիպում», «որոնք միանգամայն արժեքագրելում են այդ հրատարակությունը»: Այս հայտարարությանը կից գետեղված աղյուսակում բերված է մեր արած «վրիպակ-վրիպումներից» 10 օրինակ:

Իրականում այդ «մի քանի էջ կազմող» փաստաթուղթը Եվրոպայից մինչև Հնդկաստան ընկած տարածաշրջանում հայաբնակ բնակավայրերի մի ցուցակ է՝ ավելի քան 700 տեղանուն, որոնցից շատերը գրանցվել են այդ աղբյուրում հնչարտասանական բարբառային եզակի նստվածքով: Այսինքն, գործ ունենք ոչ թե սովորական շարադրանքի հետ, որից կարելի կլիներ կրահել գրված բառն ու տառը, այլ իրարահաջորդ, հաճախ հոլովական վերջավորություններով գրանցված տեղանունների հետ: Պատկերացում տալու համար բերենք այդպիսի մի շարք՝ «Տավշանլուայ, Գեօլտաղու, Մուհալիճու, Պանդրմայու, Էտինճկու, Փիրմաստու, Բալիքեարու, Էյնայու, Բօղասիեարու, Կելիպօլու, Մալդարայու, Զօռլուայ, Ուզունքօրփուայ, Կիւմուրճինու»:

9120 մատյանն ինքը խիստ դժվարընթեռնելի է. թանաքն արտատպված է բերի հակառակ կողմում, շատ նման են «Ե»-«ի»-«ե», «զ»-«ղ»-«շ»-«չ» տառերը: Եթե

անգամ մի պահ ընդունենք, որ այդ ավելի քան 700 տեղանունների մեջ մենք իրոք թույլ ենք տվել 10 կամ նույնիսկ կրկնապատիկ ու եռապատիկ ավելի վրիպակ և վրիպում, ապա, բնականաբար, դրանից մեր իրատարակությունը «միանգամայն արժեքագրկված» համարելը մտացածին հերյուրանք է: Սա պարզ ծշմարտություն է ձեռագիր մատյանի հետ գործ ունեցած յուրաքանչյուր մասնագետի համար: Վրիպակներ կան հենց նույն «Ո՞րն է գիտության ուղին» իրապարակման մեջ: Օրինակ՝ «ամենին» (պետք է լինի՝ «ամենակին»), «կարորություն» («կարողություն»), վերջին սյունակի «XIII-XVIII դարեր» բառերից առաջ ստորակետը բաց են թողել և այլն: Չմոռանանք, որ այդ նյութի պատասխանատվությունն ստանձնել է ոչ թե մեկ անձ, այլ ԵՊՀ մի ամբիոն ու Պատմության ինստիտուտի մի բաժին՝ իրենց ողջ անձնակազմով՝ երկու տասնյակից ավելի գիտաշխատակիցներով...

Վերադառնանք Ա.-ի ու Բ.-ի նշած 10 «Վրիպակներին» և տեսնենք, թե ո՞րն է դրանցից իրոք վրիպակ, ո՞րը՝ ոչ: Վերստուգելով Սատենադարանի 9120 մատյանում խնդրո առարկա վավերագիրը, պարզեցինք հետևյալը:

- 1) «Դերպեքիր» տեղանունը ճիշտ ենք վերծանել. ոչ թե «Դերպեքիր», այլ «Դերպեքիր»:
- 2) «Թոմարուաղու»-ն իսկապես վրիպակ է (ձեռագրում՝ «Թօմարուազու»), թեև գրքային տարբերակի տեղանվանացանկում ճիշտ ենք նշել՝ «Թոմարզու»: Բայց Ա.-ն և Բ.-ն վրիպել են մեկ այլ հարցում. եջի ներքենում առանձին ավելացված է ոչ թե «Թօմարզա», այլ «Թումարզա»: Դետաքրքիր է, որ Գ. Աղանյանցը (որի իրատարակությունն օրինակելի են համարել մեզ քննադատողները) բաց է թողել այս տեղանվան «ը» տառը, նշելով այն «Թօմարազու» ձևով, սակայն Ա.-ն և Բ.-ն կոչված են տեսնել միայն Ա. Այվազյանի վրիպակները:
- 3) «Շիրուան»-ը վրիպակ է (ձեռագրում՝ «Շիրվան»):
- 4) «Զերքէղ»-ը վրիպակ է (ձեռագրում՝ «Զերքէզ»): Գրքիս տեղանվանացանկում ճիշտ ենք նշել՝ «Զերքէզ» (Էջ 335):
- 5) «Քիլիս»-ը և վրիպակ է, և ոչ: Ձեռագրում իսկապես «Քիլի» է: Սակայն այս դեպքում, հավանաբար, վրիպողը գրիչն է, տեղանվան ճիշտ ձևը պետք է «Քիլիս» լինի:
- 6) «Եղեւարդը» վրիպակ է (ձեռագրում՝ «Եղեվարդ»):
- 7) «Մաղանձղու» վրիպակ է (ձեռագրում՝ «Մուղանձղու»):

- 8) «Ղաշ»-ը և վրիպակ է, և ոչ: Թեև ձեռագրում իսկապես «Շաշ» է, սակայն գյուղի անվան ճիշտ ձևը Ղաշն է: Մեր գրքի տեղանվանացանկում նշել ենք՝ Շաշ – տես նաև Ղաշ:
- 9) «Միաստայ»-ն և վրիպակ է, և ոչ: Թեև ձեռագրում իսկապես «Միաստայ» է, սակայն գյուղի անվան ճիշտ ձևը «Միաստայ» է:
- 10) Վերջապես, ապակողմնորոշման մի ընտիր նմուշ. «Սպեր» տեղանունը մատյանում տողադարձված է՝ «Ըսպե-րու»: Յետևաբար, «ը» վանկարար մասնիկի բացթողումը միանգամայն տեղին է: Ի դեպ, այս տեղանվան մեջ ձեռագրում առկա «ե»-ի փոխարեն Գ. Աղանյանցը կարդացել է «է»:

Իրոք բաց ենք թողել «ի Մալդէ, ի Փալագաթ, ի Մատրաս եւ յամենայն նահանգս դորին» բառերը, որ մեր քննադատների նկատած միակ լուրջ վրիպակն է: Բայց այստեղ մի վրիպակ էլ իրենք են թույլ տվել՝ մեր բացթողումը ոչ թե ատենախոսության 248-րդ էջում է (ինչպես իրենք են նշում), այլ 239-րդ էջում: Պարզապես, Ա.-ն և Բ.-ն օգտվել են մեր գրքից, թեև իրենք էին, որ ցանկանալով ամեն կերպ թույլ չտալ ինձ դոկտորի կոչում ստանալը, կտրուկ մերժեցին ատենախոսությունս գրքի տեսքով ներկայացնել պաշտպանության:

Այսպիսով՝ պարզվում է, որ Ա.-ի ու Բ.-ի վերը նշած 10 «վրիպումների» մի մասը վրիպում չեն, իսկ մյուս մասը՝ մանր և անկարևոր վրիպակներ են: Ավելին, անգամ «հավաքական ուժերով» մեր մի քանի վրիպակը «շտկելու» փորձ անելիս, Ա.-ն և Բ.-ն չեն կարողացել.

- ա) իրենք խույս տալ վրիպակներից,
 բ) թույլ են տվել լուրջ և միտումնավոր սխալներ,
 գ) չնկատելու են տվել իրենց կողմից անթերի հոչակված Գ. Աղանյանցի հրապարակման վրիպակ-վրիպումները, որոնք ամենևին չեն սահմանափակվում վերը թվարկածով: Եթե Գ. Աղանյանցի հրապարակմանը մոտենալու լինենք նույն այն սկզբունքներով, որոնցով մոտեցել են մեր հրապարակմանը Ա.-ն և Բ.-ն, ապա այնտեղ կնկատենք հետևյալ վրիպակներն ու վրիպումները.

Գ. Աղանյանցի հրատարակություն	Մատենադարան, ձեռագիր համար 9120
Ենկիպազար	Ենկիպազար
Մալդարատ	Մալդարայու
Բելրզատու	Բելրրդատու
Ղազանլիսու	Ղազանլրիսու
Սնապու	Սընապու
Տաշքեօրփրիու	Տաշքեօրփրիու
Էրզնկանայ	Էրզընկանայ
Սղերտ	Սըղերտ
Չնշկածակ	Չնըշկածակ

Խառբերդ	Խառբերք
Արդնի	Արդրնի
Շնորւշ	Շընքուշ
Ուրիա	Ուրիայ
Հզու	Հրզու
Ապաշու	Ապաղու
Նօրդզու	Նօրդրզու
Բայազիդու	Բայազիտու
Դիարիմու	Դիատիմու
Կաղզուան	Կաղզվան
յԱխլցխայ	յԱխրլցխայ
Չլտոր	Չրլտոր
յԱխլթէկ	յԱխրլթէկ
Շավշէդ	Շաւշէդ
Բանդարապաս	Բանտարապաս
Թօմառազու	Թօմարոազու
Ըսպէր	Սպէր
Ղզլար	Ղրզլար
Լնճան	Լրնճան
Քաղան	Քաշան
գիւղորէից	գիւղորէից (Գիւանի նկարագրության մեջ)
Թիֆլիզ, որ է չորս եկեղեցի տէրունի	Թիֆլիզ, որ է չորս եկեղեցին տէրունի
Ղայզուլի	Ղայղուլի
Բաբազանհծոր	Բաբաջանհծոր
Աղատակ	Ազատակ
Չաւնդրու	Չաւրնդրու
Գեօկզումբէթ	Գեօկզիւմբէթ
Բայազիդ իր նահանգովն	Բայազիդ իր նահանգօվն
Կարմիր աւերակաց	Կարմիրաւերակայ
Սէւան	Սէվան
Ցամաքաբերդ	Ցամաքաբերք
Փէշմակալ	Փէշմակալ
Բուղիսանայ	Բուղիսանայ
Կեչառիս, որոյ եկեղեցվոյ անունն սրբոյ էջմիածին է	Կեչառիս, որոյ եկեղեցվոյ անունն սրբոյ Աստուածածին է
Առաքելոց վանքն, որ ասի արենսու վանք	Առաքելոց վանքն, որ ասի Կարենսու վանք
Չրփիու	Չրրփիու
Ղզրիլիսի	Ղզրլիլիսի
Յօհանավանից թեմն	Յօհանավանից վանից թեմն

Գ. Աղանյանցը Գաղատիայի վիճակի նկարագրության միջից բաց է թողել «բոլոր» բառը, իսկ Սաղմոսավանի թեմի նկարագրությունից՝ Սէրբեվիլ տեղանունը:

Ընդգծենք, որ վերոբերյալ բոլոր դեպքերում մենք ճիշտ ենք վերարտադրել բնօրինակը: Բայց Ա.-ն և Բ.-ն, առաջնորդվելով երկակի չափանիշներով, հայտարարում են, թե Գ. Աղանյանցը «ամենայն բարեղիսղությանք» է հրատարակել բնագիրը, իսկ Ա. Այվազյանը՝ սեղանին է դրել «միանգամայն արժեքագուրկ»

«Վերահրատարակություն»: Վրիպակմերը ներելի են բոլորին, բացի Ա. Այվազյանից: Ա.-ն և Բ.-ն ընդամին անտեսում են նաև մեր կարևոր այն բացահայտումը, որ Գ. Աղանյանցի հրատարակությունը կատարվել է այժմ Երևանի Մշահոցի անվան Մատենադարանում պահվող համար 9120 մատյանից: Բացի այդ, ծանոթագրություններում պարզաբանել ենք լուսանցքներում գրչի և այլոց արած հավելումները, ինչպես նաև ներկայացրել 9120 ձեռագրի համառոտ բովանդակությունն ու բնութագրությունը: Ըստ այսմ՝ պարզ է, որ մեր կատարածը վերահրատարակություն չէ, այլ նոր հրատարակություն:

VII. Կարդանք Ա.-ի ու Բ.-ի մեզ հասցեագրած ևս մի քննադատություն. ««Դավելված Ե»»-ի վերջում՝ «Ծանոթագրություններ» վերտառության տակ (էջ 292), Ա. Այվազյանը գրում է. «Սույն հիշատակարանը հրատարակել ենք, թարգմանել անգլերեն և մանրամասն քննել հետևյալ հոդվածում՝ ընթերցողի մոտ պատրանք ստեղծելով, թե ինքն է Լիմ անապատի հիշատակարանի հրատարակիչը»: Սակայն անմիջապես էլ Ա.-ն և Բ.-ն հակասում են իրենց հայտարարությանը, գրելով. «Նա չի մոռացել հղել անգլերեն հոդվածը, որտեղ իրոք նշում է, թե «հիշատակարանը առաջին անգամ հրատարակվել է 1918 թ., իսկ ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը այն վերահրատարակել է 1941 թ.»:

Իրականում, իրենց հայտարարությամբ Ա.-ն և Բ.-ն դեմ են դուրս գալիս գիտական հղումների ընդունված ամբողջ համակարգին: Արդարև, եթե մենք հղել ենք մեր հոդվածը, որտեղ վերլուծում ենք այդ հիշատակարանի հետ կապված բազմաթիվ հարցեր, այդ թվում՝ մանրամասնորեն անդրադառնում հիշատակարանի նախորդ երկու հրատարակությունների պատմությանը, անհեթերություն չէ՝ այն պնդումը, թե մեր նպատակն է եղել հիշատակարանի առաջին հրատարակիչ ձևանալը:

Ավելին՝ պարզել ենք, որ 1941 թ. հիշատակարանի Մ. Ներսիսյանի վերահրատարակությունն ունի բազմաթիվ վրիպումներ: «Աշխատանք» թերթում 1918 թ. հրապարակված բնօրինակի հետ համեմատելուց հետո, վերատպել-վերահրատարակել ենք հիշատակարանը՝ իր նախնական տեսքով՝ ընթերցողին մատուցելով ստուգված աղբյուր, իսկ հետազոտողին՝ 1941 թ. թերի վերահրատարակությունն այլևս չօգտագործելու հնարավորություն: Եթե հետևելու լինենք Ա.-ի ու Բ.-ի տրամաբանությանը՝ ապա մենք նախ մեր հետամտած պատրանքը փշորող հոդված ենք գրել, այնուհետև հղել ենք այդ հոդվածը ու դրանով իսկ ինքներս մեզ ծուղակը գցել: Ինչպես տեսնում ենք, Ա.-ն և Բ.-ն նորից անտեսում են կատարված աշխատանքը:

Պատահական չէ, որ Ա.-ն և Բ.-ն Վ. Ղուկասյանի՝ վերոհիշյալ շրջաբերականի արտագրություն-վերատպությունն անվարան անվանում են «հրատարակություն», իսկ մեր ինքնուրույն աշխատանքը գնահատելու փոխարեն՝ հողմաղացների դեմ կռիվ տալիս...

VIII. Ա.-ն և Բ.-ն չեն խորշում բացահայտ զրպարտանքից: Այսպես՝ նրանք պնդում են, թե «ինչպես պաշտպանության ժամանակ բնութագրեցին երեք ընդդիմախոսներից երկուսը, ատենախոսության հեղինակը միշտ չէ, որ պահպանել է» ՀՀ ԲՌԴ-ի կանոնակարգով նախատեսված այն պահանջը, ըստ որի՝ «Ատենախոսության մեջ հայցորդը պարտավոր է նշել այն հեղինակներին և աղբյուրները, որոնցից նա փոխարել է առանձին դրույթներ կամ նյութեր»: Այս լկտի սուտը մեկ անգամ ևս կրկնվել էր «Հայաստանի Հանրապետություն» օրաբերի 2003թ. դեկտեմբերի 26-ի համարում՝ պատմական գիտությունների դոկտորներ՝ ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի, ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի վարիչ Բարեկեն Հարությունյանի եւ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանի համատեղ ստորագրությամբ լույս տեսած «Խնկական գիտականության և հայրենասիրության սահմանները: Մի աղմկահարույց, բայց շինծու պատմության մասին» հրապարակման մեջ, որտեղ ասված է, թե պաշտոնական ընդդիմախոսներից ակադեմիկոս Մ. Զոլալյանը «ատենախոսին... մեղադրեց իր աշխատություններից օգտվելու ժամանակ հղումներ չկատարելու, այլ կերպ ասած՝ գրագողության մեջ»:

Այս և նմանօրինակ այլ հերյուրանքներին արդեն իսկ պատասխանել է պատմական գիտությունների թեկնածու Գևորգ Յազդյանը՝ «Հարթակ» շաբաթաթում (18.02.2004), որից էլ բերում ենք հետևյալ ընդարձակ մեջբերումը.

«Այստեղ ևս առկա է առնվազն անպարկեշտ մոտեցում. եթե ոչ բացահայտ զրպարտություն: Իր ելույթում, ար. Զոլալյանը բառացիորեն ասել է հետևյալը. «...16-18-րդ դարերի հայ հոգևորականության մասին ես խոսել եմ իմ գրքում, բավականին գրել եմ և իման էլ ունեմ շատ նյութեր, որոնք հրապարակված չեն, ին ձեռքի տակ են, բայց ոչ մի տեղ, ինքն (Ա. Այվազյանը, Գ. 3.) ընդունեց իր սխալը, ին անունս անգամ չի հիշատակվել, բայց դա ինձ չի խանգարում, բոլորովին, պարո՞ն Հարությունյան, ին խիզճս կորցնել և հակառակն ասել, վիրավորել և հակառակն ասել, ընդդիմանալ նրան, հասկանու՞ն եք, այդ ձևով չի կարելի»:

Ինչ խոսք, այդ ձևով իսկապես չի կարելի: Սակայն, ար. Զոլալյանի խոսքի հասցեատերերի մեջ պետք է ավելացնել «ՀՀ»ի-ի հրապարակման մյուս ստորագրողների անունները: Ի դեպ, ավելորդ չէ հիշեցնել, որ ակադ. Զոլալյանն իր ընդդիմախոսական կարծիքի մեջ Այվազյանի անգլերեն մեկ մենագրությունը համարում էր ատենախոսության մեկ մասը, իսկ այդ

աշխատանքում Այվազյանը կատարել է հաճապատասխան հղումներ բոլոր աղբյուրներին, այդ թվում նաև՝ ակադ. Զուլայսանի հրապարակումներին: Այս մասին պարզաբանում կատարեց Այվազյանը պաշտպանության ժամանակ, որից հետո ակադ. Զուլայսանը հայտնեց իր բավարարված լինելու մասին: Ավելորդ չէ այստեղ մեջբերել ակադ. Զուլայսանի դիպուկ արտահայտությունը, որը հնչեց նրա երկրորդ ելույթի ժամանակ. «Ես գտնում եմ, որ էդ ձեր [ԵՊՀ Հայոց պատմության] ամբիոնը շիտակ, անկեղծ վերաբերմունք չի ունեցել, գիտության առաջ մեղանչել է»»:

Հաշվի չառնելով նիստի տեսագրությամբ իսկ արձանագրված այս փաստերը, Ա.-ն և Բ.-ն (որոնք վերոհիշյալ եռյակի լիակատար ենթակայության տակ են), «Ո՞րն է գիտության ուղին» նյութի մեջ կրկնում են «գրագողության» մասին նույն գրպարտությունը ու դեռ ավելին՝ առաջարկում իրենց այդ թեզը հաստատելու կոչված նոր «Փաստարկներ»: Զննենք դրանց հավաստիությունը ևս:

1) Ա.-ն և Բ.-ն գրում են. «Ա. Այվազյանի ուշադրությունից վրիպել է նաև այն հանգամանքը, որ 1765 թ. կազմված ցանկը քննված է իր ատենախոսության ընդդիմախոս Մ. Զուլայսանի աշխատությունում» (տե՛ս Մ. Զուլայսան. Արևմտյան Հայաստանը 16-18-րդ դարերում, Երևան), 1980, էջ 225): Բացելով Մ. Զուլայսանի գրքի նշված էջը՝ տեսնում ենք, որ Մ. Զուլայսանը մեկ նախադասությամբ նշել է այս ցուցակի գոյությունը (ընդ որում, հղելով Գ. Աղանյանցի հրատարակությունը, նա տեղյակ չի եղել, որ ցուցակի բնօրինակը Մատենադարանի 9120 նատյանում է), ապա, մեկ այլ վկայության վրա հենվելով, եզրակացրել, որ Ս. Էջմիածնի նվիրակական վիճակների «առաջին ու գլխավոր խնդիր մեջ մտնում էին՝ Կ. Պոլիսը, Աղրիանապոլիսը, Ղրիմը, Թոխարը, Անկարան, Երզրումը, Կարսը, Բայազետը, Վանը, Դիարբեքիրը»:

Արդ, հարց է առաջանում, ինչո՞ւ մենք պետք է հղում կատարեինք վերոհիշյալ էջին: Ի՞նչ նպատակով: Մենք հրապարակել ենք աղբյուրը՝ քաղելով այն բնօրինակից, մատնացույց ենք արել, որ առաջինն այն հրատարակել է Գ. Աղանյանը (ընդ որում, բացահայտել ենք, որ հենց այդ մատյանն է եղել նրա սկզբնաղբյուրը), կատարել ենք ճշտումներ և լուսաբանումներ: Մեր նպատակը չի եղել աղբյուրի մանրազնին քննությունը և ոչ էլ, բարիս բուն իմաստով, այդպիսի «քննություն» կա Մ. Զուլայսանի գրքում: Ուրեմն, Ա.-ն և Բ.-ն բացեիրաց մոլորեցնում են ընթերցողին, փորձում հորինված հիմքերի վրա գրպարտել մեզ:

2) Ա.-ն և Բ.-ն գրում են. «Դարձյալ Մ. Զուլայսանն է, որ Ա. Այվազյանից առաջ ուշադրություն է դարձրել Ղազար Զահկեցու 1726 թ. հիշատակարանի վրա և Մատենադարանի թիվ 2121 ձեռագրից հրատարակել մի հատված (տե՛ս Մ. Զուլայսան, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ Եվրոպացի հեղինակների, XIII-XVIII դարեր, գիրք Ա, քաղաքական պատմություն, Երևան, 1990, էջ 186): Քետևաբար,

իրավացի էր ընդդիմախոս, դոկտոր, պրոֆ. Մ. Զուլայյանը, երբ հրապարակային պաշտպանության ժամանակ՝ ի պաշտպանություն Ա. Այվազյանի, լրացուցիչ Ելույթուն հարկադրված էր նշել, որ ատենախոսն օգտվել է նաև իր աշխատություններից, բայց այդ մասին որևէ նշում չի կատարել»:

Այս հայտարարություններուն, բացի զրապարտությունից, կա երկու սխալ՝ տեսական և փաստական: Մ. Զուլայյանը քաղել և, առանց որևէ մեկնաբանության (չհաշված այն, որ աղբյուրը վերագրել է «Ղազար Զահկեցի գրչին»), հրապարակել է այդ վավերագրից ընդամենը մի փոքրիկ՝ կեսեցանոց հատված: Ընդ որում, Մ. Զուլայյանի գրքում սխալ է նշված ձեռագիր մատյանի էջը. ոչ թե 267ա, այլ 367ա, որը վրիպակ «բռնող» ու «մեկնող» Ա.-ն և Բ.-ն չեն նկատել: Ա.-ն և Բ.-ն սխալվում են նաև, կարծելով, թե Մ. Զուլայյանն է առաջին հետազոտողը, որն «ուշադրություն է դարձրել Ղազար Զահկեցու 1726 թ. հիշատակարանի վրա» և այնտեղից մի հատված հրապարակել: Իրականում, ճիշտ նույն հատվածը (առաջին բարից մինչև վերջինը) ավելի վաղ մեջբերել է Աշոտ Հովհաննիսյանը՝ տակավին 1959 թ. լույս տեսած իր «Ղրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» երկրորդ հատորում (էջ 538-539), ինչը Մ. Զուլայյանի գրքում նշված չէ: Այդ փաստը Ա.-ին ու Բ.-ին հիմք կտա՞ Եզրակացնելու, թե Մ. Զուլայյանը «գրագողություն» է կատարել: Իհարկե, ոչ: Իրականում, հնարավոր է, որ այդ հիշատակարանի այս կամ այն դրվագն օգտագործած լինեն այլ հետազոտողներ ևս: Համենայն դեպս, այդ հիշատակարանն արձանագրված է նաև Մատենադարանի համառոտ ձեռագրացուցակում (հ. Բ, Երևան, 1970, էջ 874): (Իսկ եթե առաջնորդվելու լինենք Ա.-ի ու Բ.-ի տրամաբանությամբ կամ, ավելի շուտ, դրա բացակայությամբ, ապա պետք է մեղադրեինք համալսարանական ու ակադեմիական այս կոլեկտիվներին, որ, այդ հիշատակարանից հատված հրապարակելու առաջնության դափնին վերագրելով Մ. Զուլայյանին, նրանք դիտավորյալ նսեմացնում են Աշ. Հովհաննիսյանի վաստակը):

Այսպիսով, հատուկ չնշելով Մատենադարանի 2121 ձեռագրում գետեղված Ղազար Զահկեցու հիշատակարանի վկայակոչումները Աշ. Հովհաննիսյանի, Մ. Զուլայյանի, համառոտ ձեռագրացուցակի հեղինակների (Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան) երկերում, մենք որևէ գանցանք, այն էլ «գրագողություն», բնականաբար, չենք արել: Մենք առաջին անգամ անբողջությամբ հրապարակել ենք Ղազար Զահկեցու բավականին ծավալուն հիշատակարանը, նաև օգտագործել այն՝ ատենախոսության մեջ կատարված քննության ընթացքում: Իսկ զանազան հեղինակների՝ այդ հիշատակարանից հատվածների օգտագործման կամ հղման պատմության ուսումնասիրությունն ամենևին մեր նպատակների և

պարտավորությունների մեջ չի մտնում: Այսքանը: Ինչպես տեսնում ենք, Ա.-Շ և Բ.-Շ մեզ գրպարտելու նպատակով կրկին փորձում են մոլորեցնել ընթերցողին:

Ինչ վերաբերում է երկրորդ ատենախոսի՝ Վալտեր Դիլոյանի ակնարկված մի նմանատիպ հայտարարությանը, թե իբր հրատարակել ենք «Ս. Էջմիածնի «նուիրակութեան վիճակներ» փաստաթուղթը Գյուտ Աղանյանցի «Դիւան հայոց պատմության» մատենաշարի Գ. հատորից, սակայն աղբյուրը նշել ենք միայն ծանոթագրության մեջ», ապա այդ բացահայտ սուտը հերքել ենք հենց պաշտպանության ընթացքում, որին ներկա էին Ա.-ի ու Բ.-ի գրեթե բոլոր անդամները: Ին հերքումն ստիպված էր ընդունել նաև Վ. Դիլոյանը:

ՀՅ քրեական օրենսգրքի 135-րդ հոդվածով Ա.-ի և Բ.-ի՝ գրագողության մասին արած վերոհիշյալ բանսարկությունները որակվում են գրպարտություն: Առայժմ դատախազություն չենք դիմել, խնայելով ժամանակ և էներգիա: Բազմահարկ, միտումնավոր դիտողություններն ու կեղծիքները հերքելու փոխարեն, գերադասելի է զբաղվել նաև գիտական, ստեղծարար աշխատանքով…

Սուտ է, թե Ա.-Շ և Բ.-Շ խորհուրդ են տվել ինձ վերանայել աշխատանքը: Բաժինն առհասարակ որևէ հանդիպում ինձ հետ չի ունեցել, գրավոր կամ բանավոր որևէ «խորհուրդ» չի տվել: 2003 թ. նոյեմբերի 4-ին գրված կարծիքն ինձ են հանձնել պատմության ինստիտուտի գիտքարտողարի ձեռքով՝ դեկտեմբերի 2-ին՝ պաշտպանությունից 7 օր առաջ: Մինչդեռ ամբիոնը բարեհաճել է նիստ գումարել և քննարկել իմ աշխատությունը միայն դեկտեմբերի 3-ին (ես հրաժարվել եմ մասնակցել միտումնավոր այդքան ուշ հրավիրված նիստին), ինձ հանձնելով իր կարծիքը դեկտեմբերի 4-ին, այսինքն՝ պաշտպանությունից 5 օր առաջ: Այս հետաձգումների միակ նպատակն այն էր, որպեսզի ես ժամանակ չունենամ, ֆիզիկապես չհասցնեմ պատասխանել իրենց մոգոնած կեղծիքներին, կանգնեն փաստի առաջ և ստիպված լինեմ հետ վերցնել ատենախոսությունս: Այդ հաճույքը, սակայն, դավադրության հեղինակներին չպարզեցի և ինձ թողնված սեղմ ժամկետում հասցրի պատասխանել առաջադրված բոլոր դիտողություններին (թեև, հաականալի է, դա ոյուրին գործ չէր): Եվ ինչ արժե այն պնդումը, թե «Ա. Այվազյանին ոչ այնքան հետաքրքրել է պաշտպանության հաջող ելքը, որքան... հայ հասարակությունը պառակտելու եղանակով՝ քաղաքական դիվիդենտներ շահելը»: Այս զառանցանքը թողնում ենք անպատասխան…

Առանձին հետազոտության նյութ կարող է դառնալ Մասնագիտական խորհրդի՝ ԲՈՅ-ին ներկայացրած՝ պաշտպանությանս արձանագրության անբողջական կեղծումը, որով՝

ա) 8 էջ հանվել է ի պատասխան պատմության ինստիտուտի միջին դարերի բաժնի կարծիքին իմ կարդացած գրավոր ելույթից,

բ) իմ բանավոր ընդարձակ ելույթների մեծագույն մասը դուրս է թողնվել,

գ) ելույթ ունեցածներից գրեթե բոլորի խոսքը բացահայտորեն ու միտումնավոր կերպով կեղծվել է, նրանց վերագրել են չարտահայտված մտքեր կամ արտահայտվածին հակառակ տեսակետներ, բաց են թողել իմ օգտին ասված կարևոր հատվածները (այս ամենը հաստատվում է նիստի տեսագրությամբ և ձայնագրությամբ): Բերենք ընդամենը մի քանի օրինակ.

Ակադեմիկոս Սեն Արեգատյանի ելույթը	Նույնը՝ ԲՈՅ-ին ներկայացված կեղծված վիճակում
«Այսօր մենք ներկա եղանք իսկական պաշտպանության: Ճիշտն ասած, շատ դիպուկ էր Լիլիթ Արզունանյանի խոսքը, որ իսկական պաշտպանություն էր. հասունացած գիտնականի, հասունացած դոկտորի պատասխան էր այն բոլոր արարկություններին, քննադատական դիտողություններին և այլն: Եվ այստեղ՝ հրապարակային պաշտպանության ժամանակ Արմեն Այվազյանն իրեն դրսորեց իրոք որպես հասունացած գիտնական, հասունացած պատմաբանի հետ մենք գործ ունենք: Եվ մեր կարծիքն այստեղ ներկայացվեց. Մատենադարանում է ստեղծվել այս աշխատանքը՝ քննարկվել է, մշակվել է, պրոֆեսոր Վարդան Գրիգորյանն անմիջական մասնակցություն է ունեցել [այդ աշխատանքին] որպես այդ շրջանի մասնագետ՝ և աղբյուրագետ, և պատմագետ, և անմիջականորեն այդ դարի ճանաչված մասնագետ: Աշխատանքը վերակառուցվել է, այնպես որ՝ թող այն տպավորությունը չլինի, թե սովորական դիսերտացիաների նման, միայն թե էնապես, էսպես հեղինակը բերել է: Մատենադարանում շատ հոգատար և խորը վերաբերմունք է դրսորվել և դիսերտացիայի, և դիսերտանտի նկատմամբ: Եվ պարոն [Էդվարդ] Բաղդասարյանի բաժինը, երբ քննարկել է Մատենադարանի մյուս աշխատակիցների հետ, տվել է օբյեկտիվ մի գնահատական և հանձնարարել է այդ [ատենախոսությունը] պաշտպանության: Ես շատ ուրախ եմ, որ Մատենադարանի այդ կարծիքը լիովին համապատասխանում է պաշտոնական ընդդիմախոսների կարծիքին և հանձնարարականին: Եվ ես կարծում եմ, որ Պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը դրանով կարող է արդեն կողմնորոշվել՝ պաշտոնական ընդդիմախոսներ և այն հաստատությունը՝ Մատենադարանը, որտեղ հայցորդը ստեղծել	«Իսկական պաշտպանություն էր, մենք պետք է հապատ լինենք, որ նման մասնագետներ ունենք: Դիտողությունները շատ են և հիմնականում ճիշտ, բայց Այվազյանն իրեն նույնպես լավ դրսորեց: Աշխատանքը վերամշակվել է: Մատենադարանը լրջորեն է վերաբերվել աշխատանքի քննարկմանը: Վեր են հանվել բազմաթիվ աղբյուրներ և ձեռագրեր: Այվազյանը լավ մասնագետ է, արդեն իսկ ճանաչված և մասնագիտական խորհուրդը պետք է ճիշտ կողմնորոշվի»:

<p>է իր աշխատանքը, [դրական կարծիք են տվել]: Պետք է վստահել այդ կարծիքներին և դեկավարվել դրանցով: Ես կարծում եմ, որ ճիշտ կողմնորոշվեն գիտխորհրդի անդամները և մենք շնորհալի աշխատող, նպատակասլաց գիտական գործունեություն ծավալած Արմեն Այվազյանին կկարողանանք գնահատել, այսօր շնորհելով նրան պատմական գիտությունների դոկտորի աստիճանը»:</p>	
---	--

Պատ. գիտ. դոկտոր Վլադիմիր Ղազախեցյանի ելույթը	Նույն՝ ԲՈՃ-ին ներկայացված կեղծված վիճակում
<p>«Ես դեկավարվում եմ ավտորեֆեռատով, որին լավ ծանոթացել եմ, և դեկավարվում եմ այսօրվա քննության ընթացքով: Ստացա հիանալի տպավորություն, անկախ բացասական կարծիքներից: Ընդ որում, բացասական կարծիքների մեջ ես լուրջ գիտական դիտողություններ չեմ տեսնում «ծավալը քիչ է, կառուցվածքը այսպես չէ»: Մեր աջն է հասունացած գիտնական, որին ես կրկնակի կարող եմ դրական քվեարկել»:</p>	<p>«Ծանոթացել եմ սեղմագրին, ստացել լավ տպավորություն և դիտողությունների տեղիք չի տվել: Գոհ եմ ատենախոսի պաշտպանությունից: Խելացի գիտնական է: Ծանոթ եմ նրա աշխատանքներին: Կողմ եմ քվեարկելու»:</p>

Ակադեմիկոս Վարդես Միքայելյանի երկրորդ ելույթը	Նույն ելույթը ԲՈՃ-ին ներկայացված արձանագրության մեջ բացակայում է
<p>«Ես գործ չեմ: Երբ ոչ մի բացասական ելույթ չի եղել, երբ ոչ մի էական դիտողություն չի եղել, և հետո ուզում եք տապալել: Բա դա գո՞րծ է: Սազո՞ւմ է ձեզ»:</p>	

Առաջմ բավարարվենք այսքանով և եզրակացությունները թողնենք ընթերցողին:

Ա.-Ա և Բ.-Ա գրում են, որ «պատմագիտությունն ամենից առաջ գիտություն է, իր որոշակի օրենքներով և օրինաչափություններով, որոնք, կամենում ենք թե ոչ, օբյեկտիվ են և մեզնից անկախ»: Այդպես է, սակայն կեղծիքն ու սուտը այդ օրինաչափությունների մեջ չեն մտնում, իսկ դրանք պատմագիտության մեջ ներմուծողներն այն քայլաբարում և կործանում են: Մեր պետության և ժողովողի համար այս ծայրահեղ բարդ ու խառնակ ժամանակներում Հայաստանի և սփյուռքի հասարակությունը ճիշտ ընկալեց իմ պաշտպանության դեմ կազմակերպված դավադրության քաղաքական հետին իմաստն ու նշանակությունը: Մնում է հուսալ, որ Հայաստանի պետական ու գիտակրթական հաստատությունները վաղ թե ուշ նույնպես իրենց մեջ ուժ կգտնեն այս պատմությունից անհրաժեշտ

Եզրակացություններ անելու, կտան կատարվածի պատշաճ և անհրաժեշտ գնահատականը: Իսկ առաջմն դավադրության գլխավոր կազմակերպիչները (իսկական հեղինակները Յայաստանից դուրս են) նշված Մասնագիտական խորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ փոխնախագահ Վ. Բարխուդարյանը, նույն Մասնագիտական խորհրդի փոխնախագահ, ԵՊՀ Յայոց պատմության ամբիոնի վարիչ Բ. Յարությունյանը, ինչպես նաև նրանց հլու-հնագանդ աստիճանավոր մի շարք պատմաբաններ (այդ թվում՝ պատմության ինստիտուտի տնօրեն Ա. Մելքոնյանը) հնարավորություն ունեն անխափան շարունակելու գիտության սաբուտաժն ու այլասերունը: ԲՈՅ-ի կոլեգիան, չեղյալ հայտարարելով իր 004 մասնագիտական խորհրդի 2003 թ. դեկտեմբերի 9-ի տիրահռչակ նիստը, վերոհիշյալ որոշման երկրորդ կետով հանձնարարել էր կազմակերպել ին ատենախոսության նոր պաշտպանությունը... նույն Վ. Բարխուդարյանին: Վերջինս մինչև օրս, այսինքն՝ շուրջ երեք ամիս, այդ ուղղությամբ որևէ քայլ չի ծեռնարկել: Փոխարենը «Պատմաբանասիրական հանդես»-ում հրատարակության է պատրաստվում ատենախոսությանս և ին անձի դեմ գրված հերթական պարսավագիրը, հասկացնելով, որ Վ. Բարխուդարյանի և Բ. Յարությունյանի գլխավորած ԲՈՅ-ի 004 մասնագիտական խորհրդն Ա. Այվազյանին երբեք և որևէ հանգանանքներում դոկտորական կոչում չի շնորհի: Ցավոք, այս պարզ ճշմարտությունը ԲՈՅ-ի կոլեգիան հաշվի չառավ...»

Վերը բերված կեղծարարություններին և զրապարտություններին պատասխանելը տիսուր (ու տակավին անվարտ) պարտականությունս է, սակայն նաև անհրաժեշտ աշխատանք՝ հայագիտությունը պատեհապաշտ և ազգային պատմությունն ու շահերը աճուրդի հանած «դեկավարներից» ազատագրելու, այն բարոյականացնելու համար:

Ա. Այվազյանի դոկտորական ատենախոսության տապալված պաշտպանության խնդիրն օբյեկտիվորեն լուսաբանած հրապարակումներից են.

Գևորգ Յազդյան, «Իսկական պաշտպանություն» Պատմության ինստիտուտում, «Ազգ», 11.12.2003:

Արсен Алтуնян, Беспрецедентный Провал Беспрецедентной Защиты, “Новое время” (Արսեն Ալթունյան, Աննախաղեա պաշտպանության աննախաղեա տապալումը, «Նովյե Վրեմյա»), 11.12.2003:

Պատմագիտության չինովնիկները: Դա վրեժիմնդրություն է և խայտառակություն միաժամանակ (Յարցազրույց ակադեմիկոս Յրաչիկ Սիմոնյանի հետ), «Յայոց աշխարհ», 12.12.2003:

Լевон Микаелян, Спецзаказ для спецсовета, “Голос Армении” (Լևոն Միքայելյան, Յատուկ պատվեր՝ մասնագիտական խորհրդին), 16.12.2003.

Սեն Ս. Արևշատյան, Վարդան Ռ. Գրիգորյան, ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի նախագահ՝ պրո. Ա. Թոչունյանին, «Ազգ», 23.12.2003:

Սու Սարգսյան, Զորի Բալայան, Պերճ Զեյթունցյան, Լևոն Անանյան, Ի պաշտպանություն ճշմարիտ գիտության, «Ազգ», 23.12.2003:

Գևորգ Յազդըյան, Անբարոյականությունը հայրենական հայագիտության մեջ, «Հարթակ», 24.12.2003: «Նոր Կեանք» (Լու Անջել.), 31.12.2003-03.01.2004: «Մոլորակ» (Լու Անջել.), 14-20.01.2004: «Արարատ» (Բեյրութ), 23.01.2004:

Զորի Բալայան, Պատմությունը վառող է, որը չոր պետք է պահել, «Հայաստանի Հանրապետություն», 24.01. 2004, «Ազգ», 23 և 24.01.2004:

Зорий Балаян, История – это порох, который надо держать сухим, “Голос Армении” (Патмомությունը վառող է, որը չոր պետք է պահել, «Գոլոս Արմենիի»), 27.01.2004:

Никита Заробян, Профессор Вальтер Дилюян против профессора Вальтера Дилюяна, “Голос Армении” (Պրոֆեսոր Վալտեր Դիլոյանն ընդդեմ պրոֆեսոր Վալտեր Դիլոյանի, «Գոլոս Արմենիի»), 31.01.2004:

[Ованиес Асрян], Еще один ракурс..., “Новое время” (Յովիաննես Ասրյան, Եվս մեկ հանգրեծ (ռակուլս)..., «Նովյե Վրեմյա»), 17.02. 2004.

Գևորգ Յազդըյան, Պատասխանի իրավունքով: Շինծու՞, թե՞ իրական պատմություն, «Հարթակ», 18.02.2004: